մինչեւ այնօր եղածները Ռշտունեաց աշխարհում: Տաճարի բարձր գմբէթը պատած էր ոսկեայ թիթեղներով, որոնք հեռոից վառւում էին, ճաճանչներ էին արձակում արեգակի ճառագայթների առջեւ: Տաճարի պատերը, թէ ներսից եւ թէ դրսից, զարդարուած էին գեղեցիկ բարձրաքանդակ պատկերներով, որոնց իմաստը առնուած էր հին եւ նոր կտակարաններից: Սկսեալ Աբրահամից, Դաւթից մինչեւ Փրկչի կատարած տնօրինութիւնները, բոլոր նշանաւոր անցքերի պատկերները ճշգրտած էին քարերի վրայ: Իբրեւ շրջանակ այդ պատկերների, դրուած էին խաղողի որթերի եւ զանազան բոյսերի հիւսուածքներ, սքանչելի քանդակագործութեամբ: Կային եւ այլ զանազան նկարներ, որոնք ներկայացնում էին մենամարտութեան հանդէսներ, առիւծների կռիւ, կամ թագաւորը նստած գահի վրայ, եւ շրջապատած մանկահասակ սենեկապետնրով, պար եկող աղջիկներով, երաժիշտների եւ գուսանների խումբով:

Բոլորից հրաշալի էր փրկչական պատկերը, որ քանդակուած էր արեւմտեան խորանի բարձր կամարի վրայ, իսկ նրա հանդէպ, արեւելեան կամարի վրայ՝ Գագիկ թագաւորի պատկերը, գլուխը հեզութեամբ դէպի ցած խոնարհեցրած, որպէս թէ թողութիւն էր խնդրում, եւ իր հզօր բազուկների վրայ բարձած ունէր իր հիմնած տաճարը, որ նոիրում էր փրկչին:

Ահագին գանձեր սպառոեցան տաճարի սրբութիւն-սրբութեանցը զարդարելու համար: Ոսկիապատ եւ արծաթապատ դռները սքանչելի էին: Սրբոց պատկերները դրած էին մարգարտահիւս, ականակուռ շրջանակների մէջ: Պայծառ, թանկագին անօթները եւ զանազան սպասները աչք էին շլացնում:

Արծրունեաց առաջին թագաւորի բոլոր մեծագործութիւններից մնացել էր յիշեալ տաճարը միայն, այն եւս դարերի ընթացքում շատ փոփոխութիւնների ենթարկուելով, շատ հարուածներ կրելով, կորցրել էր իր վաղեմի փառքն ու շքեղութիւնը: Միւս շէնքերի հետքերն էին միայն մնացել: Բացի ժամանակների աղէտալի արհաւիրքներից, բացի թշնամու կործանիչ ձեռքից, ինքը բնութիւնը ապստամբուեցաւ մեծ մարդու մեծ գործի դէմ: Ծովը, կարծես, կամեցաւ առնել իր հին վրէժը եւ, հետըզհետէ բարձրանալով, կրկին ետ խլեց այն, ինչ որ բռնութեամբ կտրել էին իրանից: Մեծակառոյց ամբարտակը, վիթխարի շրջապարիսպը, բարձր աշտարակներն ու բուրգերը, բոլորը կորան ջրի տակ: Մեր տեսած ժամանակում հին ամրոցից մնացել էր միայն մի փոքրիկ բեկոր, ու մի մատուռի ծայրի հետ տխուր կերպով դուրս էին նայում ջրի տակից, եւ կոծոելով ալիքների հետ, կարծես ողբում էին, լաց էին լինում կորցրած մեծութիւնը...